ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«17» հունիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-64/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Իսատիս» ՍՊԸ-ի 31.05.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Իսատիս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Իսատիս» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 31.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար ճանապարհի նշագծման ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ներկայացված բողոքով «Իսատիս» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ ժամը 08:30-ին Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանը վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից նշված հասցեում գտնվող՝ ք. Երևան, Ազատության 27 «Երազ» բիզնես կենտրոն, սակայն սպասասրահի անվտանգության աշխատակիցն արգելել է Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանին բարձրանալ 212 սենյակ, որտեղ պետք է կայանար ընթացակարգը՝ պատճառաբանելով, որ հրահանգավորված չի «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից որևիցե անձի թույլատրել ներկայանալ Ընթացակարգին մասնակցելու համար:

Այնուհետև Ընկերության լիազորված անձ Վ. Լազարյանը հայտնել է այդ մասին «Իսատիս» ՍՊԸ-ի աշխատակցին, որն էլ զանգահարելով «Լուսանշան» ՊՈԱԿ-ի գրասենյակ 010739119 հեռախոսահամարով հայտնել է իրավիճակը՝ խնդրելով տրամադրել հանձնաժողովի կազմից որևէ անդամի հեռախոսահամար:

Ի լրումն ներկայացված բողոքի՝ «Իսատիս» ՍՊԸ-ն 02.06.2016թ. 17-16 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել «Իսատիս» ՍՊԸ-ի և «Լուսանշան» ՊՈԱԿ-ի աշխատակիցների միջև հեռախոսազանգերի ժամային վերծանումը, որի համաձայն՝ 23.05.2016թ. ժամը 09:08-ին և 09:13-ին «Իսատիս» ՍՊԸ-ի աշխատակիցը զանգահարել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի գրասենյակ: Ժամը 09:13-ին Ընկերության աշխատակցին փոխանցել են Ընթացակարգի գնումները համակարգողի Ռ. Քալանթարյանի հեռախոսահամարը, որին զանգահարելով Ընկերության ներկայացուցիչը տեղեկացրել է, որ իրեն թույլ չեն տալիս բարձրանալ 212 սենյակ Ընթացակարգին մասնակցելու: Ժամը 9:15-ին «Լուսանշան» ՊՈԱԿ-ի աշխատակից Ռոման Քալանթարյանը, տեղեկացվելով «Իսատիս» ՍՊԸ-ի ներկայացուցչի սպասասրահում գտնվելու մասին՝ իջնելով սպասասրահ, Վ. Լազարյանին հայտնել է, որ ժամը 9:10-ին սկսվող Ընթացակարգը կայացել և ավարտվել է:

Ընկերությունը գտնում է, որ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 6-րդ հոդվածներով սահմանված պահանջները և ներկայացված բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել գնահատող հանձնաժողովի Ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը:

Ընկերությունը գտնում է, որ ստեղծված իրավիճակում «Իսատիս» ՍՊԸ-ի մասնակցությունը Ընթացակարգին արհեստականորեն խոչընդոտված է «Երազ» բիզնես կենտրոնի անվտանգության աշխատակցի կողմից:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.06.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-64/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Իսատիս» ՍՊԸ-ի տնօրենը բողոքը պնդեց ամբողջությամբ:

2. «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Լուսանշան» ՊՈԱԿ-ը 06.06.2016թ. թիվ 0105 գրությամբ՝ «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից 31.05.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ, հայտնել է, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգը տեղի է ունեցել 2016թ. մայսի 23-ին ք. Երևան, Ազատության 27 «Երազ» բիզնես կենտրոն 212 սենյակում:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել ժամը 19:10-ին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել հինգ ընկերություններ, որոնցից չորսը՝ հայտը անարգել ներկայացրել են հայտերի բացման օրը՝ մայիսի 23-ին մինչ ժամը 09:10 րոպեին և մասնակից ընկերություններից որևիցե մեկը Ընթացակարգի անցկացման վայր՝ 212 սենյակ ներկայանալու և հայտը հանձնելու ընթացքում որևիցե խնդրի չի հանդիպել:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից Ընթացակարգի անցկացման համար տարածքը վարձակալվել է «Երազ» բիզնես կենտրոնից, ուստի Պատվիրատուն առնչություն չի կարող ունենալ սպասասրահի աշխատակիցների հետ և հետևաբար այդ աշխատակիցները չեն կարող ուղղորդվել և հրահանգավորվել «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից:

Ինչ վերաբերվում է Ընկերության այն պնդմանը, որ «Իսատիս» ՍՊԸ-ի աշխատակիցը զանգահարել է «Լուսանշան» ՊՈԱԿ, ապա Պատվիրատուն տեղեկացրել է, որ հեռախոսազանգը ստացվել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի գրասենյակ 09:10 րոպեին, որից հետո ստանալով Պատվիրատուի աշխատակից Ռ. Քալանթարյանի հեռախոսահամարը, արդեն 09:15 րոպեին Ընկերության ներկայացուցիչ Վ. Լազարյանը զանգահարել է նրան՝ պատճառաբանելով, որ չի կարողանում գտնել Ընթացակարգի անցկացման վայրը և խնդրել է դիմավորել իրեն: Ռ. Քալանթարյանը հանդիպել է Ընկերության ներկայացուցչի հետ, որն էլ իր հերթին ցանկացել է հանձնել Ընթացակարգին մասնակցելու հայտը, սակայն Պատվիրատուի աշխատակիցը մերժել է այն ընդունել և հայտնել է, որ հայտերի բացման նիստը սկսվել է և ավարտվել է հայտերի ներկայացման վերջնաժամկետը, ուստի չի կարող ընդունել Ընկերության հայտը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձաժողովի կողմից ՀՀ գնումների օրենսդրության պահանջների խախտումներ և սահմանափակումներ տեղի չեն ունեցել, ինչպես նաև Պատվիրատուի կողմից չի խոչընդոտվել որևէ մասնակցի մասնակցության իրավունքը, ուստի Պատվիրատուն խնդրել է մերժել «Իսատիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքը և անփոփոխ թողնել գնահատող հանձնաժողովի Ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.06.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-64/16 բողոքի շրջանակներում Պատվիրատուն պնդել է 06.06.2016թ. թիվ 0105 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը՝ խնդրելով Ընկերության կողմից 31.05.2016թ. բողոքը մերժել՝ այն անհիմն լինելու պատճառով:

3. ԳԲԽ-64/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-64/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կարիքների համար ճանապարհի նշագծման ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով

կազմակեպվել է «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

2. «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կարիքների համար ճանապարհի նշագծման ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով կազմակեպված «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 23.05.2016թ. ժամը 09:10-ին «Երազ» բիզնես կենտրոնի 212 սենյակում:

3. Բողոքում նշված փաստական հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով Կենտրոնը 08.06.2016թ. թիվ 01/04.1/2224-16 գրությամբ դիմել է «Երազ» բիզնես կենտրոնի ղեկավարությանը՝ խնդրելով հայտնել.

- Ինչպես է իրականացվում «Երազ» բիզնես կենտրոնի մուտքի ռեժիմը:
- «Երազ» բիզնես կենտրոնում առկա է պահակակետ, թե՝ ոչ:
- Ով կարող է մուտք գործել «Երազ» բիզնես կենտրոնի տարածք և ինչ կարգով:
- Ընդհանուր առմամբ, «Երազ» բիզնես կենտրոնի մուտքի ռեժիմը արդյոք խոչընդոտում է 212 սենյակ բարձրանալուն, թե՝ ոչ, և եթե այո, ապա ինչ եղանակով:
- Արդյոք «Երազ» բիզնես կենտրոնը ունի տեղեկատվություն այն մասին, որ 08:30-ին Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանը ներկայացել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից նշված հասցեում գտնվող՝ ք. Երևան, Ազատության 27 «Երազ» բիզնես կենտրոն, սակայն չի կարողացել բարձրանալ 212 սենյակ՝ սպասասրահի անվտանգության աշխատակցի կողմից արգելելու հետևանքով:

4. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.06.2016թ. թիվ 01/04.1/2224-16 գրությանն ի պատասխան՝ 16.06.2016թ. գրությամբ «Երազ» բիզնես կենտրոնի ղեկավարությունը հայտնել է հետևյալը.

«Երազ» բիզնես կենտրոնում սահմանված է 24 ժամյա ազատ մուտքի ռեժիմ՝ առանց որևէ սահմանափակումների: Բիզնես կենտրոնի առաջին մասնաշենքում առկա չէ պահակակետ, այլ սպասասրահում գործում է ընդունարան, որտեղ իրենց աշխատանքային պարտականությունները կատարող աշխատակիցները որևէ ձևով չեն սահմանափակում անձանց մուտքը բիզնես կենտրոնի տարածք, այլ միայն այցելուների համապատասխան հարցման պարագայում տրամադրում են անհրաժեշ տեղեկատվություն բիզնես կենտրոնում գործող ընկերությունների գրասենյակների և կազմակերպվող միջոցառումների վերաբերյալ, այսինքն՝ «Երազ» բիզնես կենտրոնում

սահմանված է ազատ մուտքի ռեժիմ, հետևաբար բիզնես կենտրոնի տարածք առանց որևէ սահմանափակման կարող է մուտք գործել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է բարձրանալ բիզնես կենտրոնում գտնվող որևէ սենյակ կամ ցանկանում է մասնակցել բիզնես կենտրոնում կազմակերպվող որևէ միջոցառման, ընդունարանի աշխատակիցները բիզնես կենտրոն մուտք գործած անձանցից որևէ փաստաթուղթ չեն պահանջում, չեն խոչընդոտում նրանց մուտքը բիզնես կենտրոն և վերջիններիս տեղաշարժը բիզնես կենտրոնի տարածքում: Հետևաբար բիզնես կենտրոնի որևէ սենյակ, իսկ տվյալ դեպքում մասնավորապես 212 սենյակ բարձրանալու որևէ խոչընդոտ չկա և ցանկացած շահագրգիռ անձ առանց որևէ սահմանափակման իրավունք ունի բարձրանալ ոչ միայն 212 սենյակ, այլ բիզնես կենտրոնի ցանկացած այլ սենյակ:

Բիզնես կենտրոնի ղեկավարությունը, ինչպես նաև ընդունարանի աշխատակիցները որևէ տեղեկատվություն չունեն «Իսատիս» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարած Ընթացակարգին մասնակցելու համար 23.05.2016թ. ժամը 08:30-ին ներկայանալու, առավել ևս ընդունարանի աշխատակցի կողմից Ընկերության ներկայացուցչին 212 սենյակ բարձրանալ չթույլատրելու վերաբերյալ, քանի որ նման միջադեպ բիզնես կենտրոնում չի գրանցվել և հետևաբար էլ բիզնես կենտրոնը «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից պահանջվող տեղեկատվությանը չի տիրապետում:

4. ԳԲԽ-64/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

Կենտրոնը, ուսումնասիրելով «Իսատիս» ՍՊԸ-ի 31.05.2016թ. ներկայացրած բողոքը, «Լուսանշան» ՊՈԱԿ-ի 06.06.2016թ. թիվ 0105 գրությունը, 08.06.2016թ. թիվ 01/04.1/2224-16թ. Կենտրոնի գրությանն ի պատասխան՝ 16.06.2016թ. «Երազ» բիզնես կենտրոնի գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերը բացվում են հրավերում նշված պահին՝ հայտերի բացման նիստում: Հայտերի բացման օրը և ժամը պետք է համընկնեն դրանք ներկայացնելու վերջնաժամկետին:

«Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի համաձայն՝ բացառությամբ էլեկտրոնային եղանակով կատարվող գնումների, գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ դրանց ստացման հերթականության՝ գրանցամատյանում նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով դրա մասին տրվում է տեղեկանք: **Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում** և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

«Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կարիքների համար ճանապարհի նշագծման ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով կազմակեպված «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 23.05.2016թ. ժամը 09:10-ին «Երազ» բիզնես կենտրոնի 212 սենյակում:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ ժամը 08:30-ին Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանը վերոհիշյալ ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից նշված հասցեում գտնվող՝ ք. Երևան, Ազատության 27 «Երազ» բիզնես կենտրոն, սակայն սպասասրահի անվտանգության աշխատակիցն արգելել է Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանին բարձրանալ 212 սենյակ, որտեղ պետք է կայանար ընթացակարգը՝ պատճառաբանելով, որ հրահանգավորված չի «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից որևիցե անձի թույլատրել ներկայանալ Ընթացակարգին մասնակցելու համար, ինչի արդյունքում, ըստ Ընկերության, սահմանափակվել է նրա մասնակցությունը Ընթացակարգին:

Սակայն Ընկերությունը բողոքի քննության շրջանակներում չի ներկայացրել վերոնշյալ փաստը հավաստող ապացույց, միայն ի լրումն ներկայացված բողոքի՝ 02.06.2016թ. 17-16 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել «Իսատիս» ՍՊԸ-ի և «Լուսանշան» ՊՈԱԿ-ի աշխատակիցների միջև հեռախոսազանգերի վերծանումը, սակայն Կենտրոնը գտնում է, որ հեռախոսազանգերի վերծանումը չի կարող դիտվել, որպես բողոքում նշված փաստերի ապացույց:

Ավելին, Կենտրոնը 08.06.2016թ. թիվ 01/04.1/2224-16 գրությամբ դիմել է «Երազ» բիզնես կենտրոնի ղեկավարությանը՝ խնդրելով հայտնել՝ արդյոք «Երազ» բիզնես կենտրոնը ունի տեղեկատվություն այն մասին, որ 08:30-ին Ընկերության ներկայացուցիչ Վարդան Լազարյանը ներկայացել է «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կողմից նշված հասցեում գտնվող՝ ք. Երևան, Ազատության 27 «Երազ» բիզնես կենտրոն, սակայն չի կարողացել բարձրանալ 212 սենյակ՝ սպասասրահի անվտանգության աշխատակցի կողմից արգելելու հետևանքով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 08.06.2016թ. թիվ 01/04.1/2224-16 գրությանն ի պատասխան՝ 16.06.2016թ. գրությամբ «Երազ» բիզնես կենտրոնի ղեկավարությունը հայտնել է, որ «Երազ» բիզնես կենտրոնում ***սահմանված է ազատ մուտքի ռեժիմ, հետևաբար բիզնես կենտրոնի տարածք առանց որևէ սահմանափակման կարող է մուտք գործել յուրաքանչյուր ոք, ով ցանկանում է բարձրանալ բիզնես կենտրոնում գտնվող որևէ սենյակ կամ ցանկանում է մասնակցել բիզնես կենտրոնում կազմակերպվող որևէ միջոցառման***, ընդունարանի աշխատակիցները բիզնես կենտրոն մուտք գործած անձանցից որևէ փաստաթուղթ չեն պահանջում, չեն խոչընդոտում նրանց մուտքը բիզնես կենտրոն և վերջիններիս տեղաշարժը բիզնես կենտրոնի տարածքում: Հետևաբար բիզնես կենտրոնի որևէ սենյակ, իսկ տվյալ դեպքում մասնավորապես 212 սենյակ բարձրանալու որևէ խոչընդոտ չկա և ցանկացած շահագրգիռ անձ առանց որևէ սահմանափակման իրավունք ունի բարձրանալ ոչ միայն 212 սենյակ, այլ բիզնես կենտրոնի ցանկացած այլ սենյակ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ բողոքի քննության ընթացքում ձեռք բերված ապացույցները չեն կարող հիմնավորել բողոքում նշված փաստերը և չեն հավաստել Ընկերության մասնակցության սահմանափակումը Ընթացակարգին:

Ինչ վերաբերվում է Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը 23.05.2016թ. ժամը 09:15 րոպեին, այսինքն՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետից հետո, չընդունելուն, ապա Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները, քանի որ Կարգի 43-րդ կետի համաձայն՝ հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը առաջարկում է «Իսատիս» ՍՊԸ-ի՝ «Լուսանշան» ՊՈԱԿ-ի կարիքների համար ճանապարհի նշագծման ներկերի և լուծիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԼՈՒՍ-ԲԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ընթացակարգը հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ 31.05.2016թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ	Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ	Մ.Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-64/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Գևորգյան